

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33/6

16 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Ֆարմգրիգ» ՍՊԸ 21.11.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 18.11.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 272382 որոշման դեմ:

«Ֆարմգրիգ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

2014 թ-ի հունիսի եկամտահարկի ամփոփ հաշվարկը ուշ ներկայացնելու համար Մաշտոցի ՀՏ կողմից «Ֆարմգրիգ» ՍՊԸ-ի նկատմամբ նշանակվել է վարչական տույժ 20.000 դրամի չափով: Բանը նրանում է, որ հունիսին եկամտահարկի ամփոփ հաշվարկը ներկայացրվել է հենց հունիս ամսին և էլեկտրոնային սարքը ցույց է տվել «վավեր» հաստատումը: Պարզվել է, որ հարկային հաշվետվությունների ընդունման էլեկտրոնային համակարգում ինչ-որ թիվ է փոխվել, որի հետևանքով եկամտահարկի ամփոփ հաշվարկը չի ընդունվել:

«Ֆարմգրիգ» ՍՊԸ-ն 2014 թ-ի սկզբից եկամտահարկի և շրջանառության հարկերը վճարել է, ինչպես նաև ամփոփ հաշվարկները ներկայացրել է սահմանված ժամկետներից շուտ: Եվ ոչ միայն 2014 թ-ին: Տարիներ շարունակ հարկերի վճարումը և հաշվետվությունների ներկայացումը կատարել է ժամանակից շուտ:

«Ֆարմգրիգ» ՍՊԸ-ն 1 % եկամտահարկի ժամանակ հազիվ էր կարողանում գոյատևել, իսկ 3,5%-ի շրջանառության հարկի բարձր բեռի պատճառով խրվել է պարտքերի մեջ և հասել լուծարման եզրին: Անգամ աշխատավարձերը չի կարողանում ժամանակին վճարել:

Մաշտոցի ՀՏ վերաբերմունքն ընկերությունը համարում է անարդարացի, որովհետև պատասխանատվության է ենթարկվել ոչ թե հարկը ժամանակին չվճարելու, այլ՝ թյուրիմացության պատճառով եկամտահարկի ամփոփ հաշվարկը ուշացնելու համար, այն էլ առավելագույն չափով:

Ելնելով վերոգրյալից՝ «Ֆարմգրիգ» ՍՊԸ-ն խնդրում է հաշվի առնել վերոշարադրյալը և բեկանել Մաշտոցի ՀՏ պետի 18.11.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 272382 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Ֆարմգրիգ» ՍՊԸ կողմից 2014 թ-ի հունիս ամսվա եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի ամսական ամփոփ հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելու համար ընկերության տնօրեն Գ.Թանգյանը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ պարբերության հատկանիշներով ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի

18.11.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 272382 որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամ:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 18.11.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 272382 որոշումն ընդունվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով նախատեսված պահանջների խախտմամբ: Այսպես, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն. «Վարչական փույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի»:

Քննարկվող դեպքում 2014 թ-ի հունիս ամսվա եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի ամսական ամփոփ հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելու համար «Ֆարմգրիգ» ՍՊԸ տնօրենը ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 272382 որոշմամբ վարչական տույժի է ենթարկվել միայն 18.11.2014 թ-ին: Այսինքն, վարչական տույժը նշանակվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետի խախտմամբ, այն է՝ իրավախախտումը կատարվելու օրվանից երկու ամիս հետո ընկած ժամանակահատվածում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.»:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Ֆարմգրիգ» ՍՊԸ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բեկանել ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 18.11.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 272382 որոշումը, իսկ գործը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝

**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**